

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՆԱՄԱՍՏԱՐԱՆ

**ՆԱՅԱՍՏԱՆ - ԲՈՒԼՂԱՐԻԱ.
ԱՆՅՅԱԼԸ, ՆԵՐԿԱՆ ԵՎ ԱՊԱԳԱՆ**

Գիտաժողովի զեկույցների ժողովածու

ԵՐԵՎԱՆ

ԵՊՆ ՆՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

2009

**ՆԱՅ ՓՈԽՍՏԱԿԱՆՆԵՐԸ ԲՈՒՂԱՐԻԱՅՈՒՄ
1896-1900 Թ.Թ.**

Բուլղարիան այն երկրներից մեկն էր, որոնք հանգրվան դարձան 1895-96 թվականների կոտորածներից փախուստով փրկված բազմաթիվ հայերի համար: Բուլղարական տարբեր քաղաքներում, հիմնականում Ռուսչուկում (այսպիսով՝ Ռուստ), Ֆիլիպոպոլսում և Վառնայում կուրակված ընչազուրկ և անօթևան փախստականների այդ զանգվածների համար օտարության մեջ համիդյան յաթաղանից ոչ պակաս մեծ սպառնալիք դարձան սովն ու համաճարակները: Փախստականներն սկզբնական շրջանում հարկադրված էին բաց երկնքի տակ գիշերել: Բուլղարական կառավարությունը, ի վիճակի չլինելով այլ աջակցություն ցուցաբերել, լավագույն դեպքում նրանց տրամադրում էր լքված և անմարդաբնակ դարձած հյուղակներ, բարաքներ և այլն: Ռուսչուկում և նրա շրջակայքում գտնվող փախստականներին տրամադրվեցին, օրինակ, քաղաքից 2 կմ հեռավորության վրա գտնվող մի շարք փայտե բարաքներ, որոնք նախկինում կառուցվել էին խուլերայով տառապող հիվանդներին մեկուսացնելու համար և 1890-ականների կեսերին դադարակցված էին:¹ Միանգամայն պարզ էր, որ առանց արտաքին աջակցության այդ փախստականներն ի վիճակի չէին լինի գոյատևել: Միակ կազմակերպությունը, որը մի քանի ամիս կարողացավ փախստականների մի մասին որոշ օգնություն ցույց տալ, Կ. Պոլսի ամերիկյան աստվածաշնչային ընկերության՝ Վառնայում գտնվող մասնաճյուղն էր, որը սակայն դեռ 1896թ. գարնանը, սպառելով իր միջոցները՝ լուծարվեց: Ահա այս ծանր ու անհուսալի իրադրությունում էր, երբ դր. Յոհաննես Լեփսիուսի կողմից ստեղծված «Գերմանական առաքելություն Արևելքում» ընկերությունը, որը 1896-2000 թվականներին գործում էր նմանապես Լեփսիուսի կողմից հիմնված «Նայասարանի օգնության գերմանական միություն» կազմակերպության կառույցում որպես այդ կազմակերպության՝ Բեռլինի կոմիտեն, ստանձնեց ի թիվս բազմաթիվ այլ տարածքների, նաև Բուլղարայում հավաքված հայերին օգնության ցուցաբերման հանձնառությունը: 1896թ.-ի դեկտեմբերին ծագումով ղարաբաղցի հայ ավերարանական քահանա Աբրահամ Ամիրխանյանցը² Լեփսիուսի հանձնարարականով մեկնեց Բուլղարիա՝ այնտեղ գտնվող հայ փախստականների դրությանը ծանոթանալու և օգնության կազմակերպման համար առաջարկներ ներկայացնելու համար:³

Աննկարագրելի թշվառությունն ու զրկանքները, որոնց նա այսպես ամեն քայլափոխի հանդիպում էր, վկայում էին օգնությունն օր առաջ սկսելու անհրաժեշտությունը: «Այնտեղ միմյանց վրա լցված են բազմաթիվ փախստականներ,- գրում էր Ամիրխանյանցը՝ ամբողջացնելով Ռուսչուկ քաղաքի՝ ավելի քան 2000 փախստականների ճամբարից ստացած իր տպավորությունները,- թշվառ, ցնցոտիների մեջ, առանց անկողիների, կեղտոտ և սովահար, հյուծված, հուսահատ դեմքերով, հույսի և հեռանկարի ոչ մի նշույլ: Նրանք հարյուրներով նստած են այնտեղ, ոչինչ չեն անում, և ոչինչ չասող աչքերը սևեռում են սրա կամ նրա վրա: Նրանց տեսքը, շարժումները անկենդան և անգույն են»:⁴

Ռուսչուկում Ամիրխանյանցը Լեփսիուսի ընկերության կողմից տրված գումարով ճամբարականներին ցուցաբերեց առաջին օգնությունը. նրանց հատկացրեց որոշ քանակությամբ սննդամթերք,⁵ նաև գնեց մեծաքանակ կտորեղեն, կոճակներ, ասեղներ, դերձան և այլն՝ կանանց պարվիրելով հագուստներ կարել ու բաժանել ամենակարիքավորներին: Ապա իր շրջագայությունը նա շարունակեց Վառնայում և Շումլայում, որտեղ համապատասխանաբար կային 6000 և 2000 փախստականներ: Նրանց բաժանելով որոշ քանակությամբ դրամ՝ նա մեկնեց Պրավադի, այնուհետև Բուրգաս և Ֆիլիպոպոլիս, որից հետո վերադարձավ Գերմանիա:⁶

Նրա տեղեկությունների հիման վրա Բեռլինի կոմիտեն վճռեց փախստականների ամենամեծ կենտրոնում՝ Վառնայում բացել նաև որբանոց, և Ա՝ Ամիրխանյանցը, ստանալով այդ իրագործելու հանձնարարականը՝ դարձյալ վերադարձավ Բուլղարիա: Նրա բացակայության ընթացքում քաղաքում գործող միակ բարեգործական կազմակերպությունը՝ արդեն հիշատակված Կ. Պոլսի ամերիկյան աստվածաշնչային ընկերության մասնաճյուղը, սպառելով իր նյութական հնարավորությունները, արդեն լուծարվել էր,⁷ և Ամիրխանյանցը փախստականներին գտավ անհամեմատ ավելի թշվառ դրության մեջ, քան նախկինում էր. «Շուրջ բոլորը մարդիկ են սողում, նիհար, ինչպես սրվերներ,- գրում էր նա ապրիլին Վարնայից:- Նրանց մկանները անհետացել են: Նրանց դեմքը գունապ և դեղնավուն է դարձել: Նրանց հագուստը լրիվ պարտառաված է...»:⁸

Մայիսի 12-ին տեղի ունեցավ որբանոցի բացումը, որը գտնվում էր երկու վարձակալված տներում, և որտեղ միանգամից խնամքի տակ վերցվեցին 280 երեխաներ:⁹ Միաժամանակ փախստականներին հետադադարյալ ման հնարավորություն ընձեռելու համար ձեռնարկվեցին նաև առաջին անհրաժեշտության այլ միջոցառումներ. մասնավորապես մայիսի 2-ին հիմնվեց մի հասարակական ճաշարան, որտեղ 10 պֆեննիգով կարելի

էր լիարժեք սնունդ ստանալ, իսկ մեկ շաբաթ անց մի նման ճաշարան հիմնվեց նաև Շումլայում: Այդ՝ թեկուզև չնչին գներն ամենաաղքատ փախստականներին ևս մարչելի դարձնելու համար նրանց բաժանվեց դրամ, իսկ հեքո քայլեր ձեռնարկվեցին նաև նրանց ինքնուրույն վաստակի հնարավորություն տալու ուղղությամբ: Շատ փախստականներ Ա. Ա. միրխանյանցից ստացան գյուղատնտեսական գործիքներ և այգիներում աշխատելով՝ օրական վաստակում էին 2-3 ֆրանկ: Մյուսները զինվում էին այլ աշխատանքների համար անհրաժեշտ պարագաներով՝ այդ կերպ ի վիճակի դառնալով հոգալ իրենց և իրենց ընտանիքների ապրուստը: «Ես մարդկանց հարցնում եմ, թե նրանք կուզենան իր մեջքի վրա պրտելով՝ նավթ վաճառել,- գրում էր Ա. Ա. միրխանյանցն իր մայիսի 15-ի նամակում:- Դրական պատասխանի դեպքում նրանք անմիջապես նավթ են ստանում: Մեկը կոշիկի կաղապարներ պատրաստել գիտի, սակայն փայտ չունի, և ես այդ գնում եմ նրա համար: Մյուսների համար կաշի եմ գնել, և նրանք հնակարկատությամբ վաստակում են իրենց օրվա հացը: Մեկը չորացված ձուկ է տանում շուկա, մյուսը՝ բանջարեղեն, մեկ ուրիշը՝ ծխախոտ և այլն: Երբեմն միայն 10-15 մարկ է հարկավոր մի տղամարդու օրական 1-2 ֆրանկով իր ընտանիքը պահելու հնարավորություն տալու համար, երբեմն, սակայն, ըստ աշխատանքի բնույթի, 30, 40, 60 և 80 ֆրանկ: Շատերի համար կոշիկի քուրք և խոզանակներ եմ գնել, և նրանք փողոցում կոշիկ են մաքրում կարողանալով կերակրել իրենց ընտանիքներին...»:¹⁰

Իսկ ինչ վերաբերում էր համեմատաբար կրտսեր տարիքի տղաներին, ապա Ամիրխանյանցը վճռեց նրանց արհեստներ ուսուցանել՝ այդ նպատակով փախստականների շարքերից հավաքագրելով թիթեղագործության, արաղձագործության, կոշկակարության, դերձակության և գրաշարության մեջ հմուտ վարպետների: Նրանցից յուրաքանչյուրին կցվեց 10 հոգուց բաղկացած մի խումբ, որոնց ապրուստի, սննդի և հագուստի բոլոր ծախսերն ումսան ողջ ժամանակամիջոցում հատուցում էր Ամիրխանյանցը Բեռլինի կոմիտեից հատկացված միջոցներով: Իր ցանկալի լուծումը ստացավ նաև որբանոցի երեխաների և փախստականների բուժասպասարկման գործը, որը Բեռլինի կոմիտեի կողմից հանձնարարվեց գերմանաբնակ հայագի բժշկուհի օր. Մելիք-Բեգլարյանին:¹¹

Որքան էլ նշված միջոցառումները կարևոր և մեծանշանակ էին, այնուամենայնիվ, փախստականների այդ բազմության դրության բարելավումը շարունակ հարկադրում էր նոր և ավելի արդյունավետ ուղիներ որոնել, ուստի կատարված աշխատանքներին ծանոթանալու և ապագայի ա-

նելիքները համարելով որոշարկելու նպատակով 1897 թ-ի հուլիսին մեկ շաբաթով Վառնա մեկնեց նաև Յոհ. Լեփսիուսը:¹²

Նրա ժամանման լուրն անմիջապես տարածվեց ողջ քաղաքում, և առաջին իսկ օրից նրան հեղհույն էր օգնություն հայցող մարդկանց մի մեծ բազմություն: Առավոտյան, երբ նա արթնանում էր, դուռը պատված էր մարդկանցով, որոնք այնտեղ հերթապահել էին նաև ամբողջ գիշեր... Եվ այնուամենայնիվ, ինչպես վկայում էր Լեփսիուսը, հարկադրաբար խնդրարկուի դերում հայտնված այդ մարդկանց մտրացիկի հոգեբանությունը շարունակում էր օտար լինել. «Շատերը ձեռքը մեկնելու պահին թեքում էին իրենց դեմքը... մեկընդմեջ մի հյուծված կերպարանք ծնկի էր իջնում իմ ձեռքը համբուրելու համար, որից ես չէի կարողանում պաշտպանվել», - գրում էր Լեփսիուսը:

Վառնայում վերոնշյալ ամերիկյան ընկերության գործունեության լուծարումից հետո փակման սպառնալիքի տակ էին գտնվում նաև նրա կողմից հիմնված երկու աշխատասրահները, որտեղ մոտ հարյուր աղջիկներ ու կանայք զբաղված էին արևելյան նուրբ գործվածքների պատրաստմամբ: Նավարարիմ այն սկզբունքին, որ մարդկանց դրության բարելավման ամենաարդյունավետ միջոցը աշխատատեղերի ստեղծումն էր, Լեփսիուսը վճռեց այդ արտադրամասերն ամեն գնով պահպանել և, հանձն առնելով Բեռլինում համապատասխան շուկա գտնել, նա այնտեղ աշխատող բանվորուհիներին մի քանի խոշոր պատվերներ տվեց՝ կատարելով նաև նախնական վճարումներ: «Այն, ինչի կարիքը այդ աղքատ և աշխատասեր ժողովուրդն ունի, ողորմությունը չէ,- գրում էր նա իր վերադարձից հետո,- այլ աշխատանքը...»:¹³

Քաղաքի հայերի հետ Լեփսիուսի ունեցած դրամատիկ և տպավորիչ շփումները¹⁴ վերստին և նորովի փաստեցին այն նախնական ըմբռնումները, որ նա ուներ հայ ժողովրդի բացառիկ ներուժի և ունակությունների վերաբերյալ: «Ով կրեսնի այդ երեխաներին իրենց նուրբ և ինտելիգենտ դեմքերով,- նշում էր նա այդ առթիվ,- և կնկարի նրանց օժտվածությունը, միայն դժգոհությամբ կվերաբերվի այն նախադիմացներին, որոնք ուղղվում են հայ ժողովրդի հասցեին: Եթե մի ռասա իր բնական հատկանիշներով կոչված է դառնալու բարձր մշակույթի կրող, ապա այդ հայկականն է: Եթե նրա բարոյական զարգացումը համաքայլ չի եղել բնականին, ապա այդ կարելի է բացատրել միայն Թուրքիայի դարավոր ճնշմամբ և կողոպտիչ պետական ու տնտեսական հարաբերություններով»:¹⁵

Չքավորության, սովի և հիվանդությունների դեմ պայքարը ուժերի մեծագույն լարումով շարունակվեց նաև 1897թ-ի աշնանը և ձմռանը: Ընդ

որում այդ ամիսներին հարկ եղավ նույնիսկ անցնել սննդի ամենօրյա բաշխման պրակտիկային, որի միջոցով իրենց գոյությունը պահպանում էին 300-400 մարդիկ: Զուգահեռաբար որբանոցում խնամքի փակ գործող երեխաների թիվը հասցվեց 300-ի, որոնցից միայն մեկ քառորդն էին որբեր: Մյուսները սերում էին ծայրահեղ աղքատության մեջ գործող ընտանիքներից, որոնք նրանց համար հոգ փանել չէին կարող: Ուշագրավ է, որ Բեռլինի կոմիտեի՝ այդ քայլը պայմանավորված էր երեխաների ոչ միայն ֆիզիկական, այլև բարոյական փրկության մտահոգությամբ: «Այդ ծանր գրկանքների շրջանում մենք պետք է ջանանք, որ նրանք բարոյական անկման չենթարկվեն, - նշում էր Լեփսիուսը: - Նավանաբար մի քանի ամսից, երբ մեզ կհաջողվի աշխատանքի ավելի լայն հնարավորություններ ստեղծել, կկարողանանք մեր աշխատանքը սահմանափակել այնքան, որ միայն որբերին կխնամենք»:¹⁶

Աշխարհը և ձմռանը Բուլղարիայում մոլեգնող համաճարակների շրջանում կենսականորեն կարևոր նշանակություն ունեցավ նաև դր. Մելիք-Բեգլարյանի գործունեությունը, որը մինչև փարեվերջ 9027 բժշկական փնտրությունների ընթացքում կարողացավ սպասարկել 3816 հիվանդների:¹⁷ Նիվանդությունների դեմ նրա հետևողական պայքարի շնորհիվ, որն արդյունավորվում էր Բեռլինից ուղարկված մեծաքանակ խիսնիսի և այլ արժեքավոր դեղորայքների օգտագործմամբ, համաճարակների զարգացումը կասեցվեց, և հազարավոր մարդիկ փրկվեցին անխուսափելի թվացող մահից:

Բուլղարահայրության՝ այդ սպասնալից ճգնաժամային դրությունը 1898թ-ի գարնանը սկսեց մեղմանալ, որին զուգահեռ նվազում էր նաև որբանոցի երեխաների թվաքանակը: Պարզ դարձնելու համար, թե այդ որբան արագ էր փրկվում ունենում, կարելի է միայն նշել, որ 1898թ-ի սկզբին որբանոցային հաստատությունում մնացել էին ընդամենը 6 փասնյակ երեխաներ:¹⁸ Իրադրության՝ այդ փոփոխությունները պայմանավորված էին ոչ միայն օգնության աշխատանքների արդյունավետությամբ, այլև, ինչպես դիպուկ կերպով նշում է Լեփսիուսի երկարամյա աշխատակից Ռիխարդ Շեֆերը, այն փաստով, որ «Եվրոպական հողի վրա, բնականոն պետական և փոփոխական հարաբերությունների պայմաններում փախստական հայերը զարմանալի արագ էին մուտք գործում աշխատանքային կյանք, և ընտանիքի՝ իրենց ցայտուն ըմբռնողությամբ նույնիսկ հեռավոր ազգականները, հենց որ սնունդ և բնակարանային պայմաններ էին ձեռք բերում, որբացած երեխաներին փանում էին իրենց ընտանեկան միջավայրը...»:¹⁹ Այդ ամենից զատ, սակայն, կար մեկ այլ լրացուցիչ նախադրյալ

ևս. 1898թ-ի սկզբին փախստականների շրջանում ի հայտ եկան հայրենիք վերադառնալու և այնպեղ վերաբնավորվելու ցանկություններ, որոնք, համառոտ լինելով հայությանն իր բնօրրանում համախմբելու՝ Բեռլինի կոմիտեի նպատակներին, վերջինիս կողմից նյութական և բարոյական մեծ աջակցություն գտան: Դր. Մելիք-Բեգլարյանին և նրա գործընկերներին հանձնարարվեց շտապ կերպով կազմակերպել փախստականների վերադարձը դեպի իրենց բնօրրանը:

Ուշագրավ է, որ երբ վերջիններս ձեռնամուխ եղան այդ գործին՝ թուրքական կառավարությունը՝ Վառնայի իր հյուպատոսության միջոցով փորձում էր ամեն կերպ խոչընդոտել ու արգելել դա: Թուրք հյուպատոսը, ինչպես իր նամակներում փնտրելագնում էր Մելիք-Բեգլարյանը, սկզբում կարեգորիկ կերպով հրաժարվում էր փախստականներին վերադարձի թույլտվություն փայ, իսկ այնուհետև դր. Բեգլարյանի և իր աշխատակիցների ակտիվ միջամտությունից հետո համաձայնեց դա միայն միայնակ կանանց թույլատրել: Չնայած այդ ժամանակ վերադարձի դիմում էին կատարել անհամեմատ մեծ թվով փախստականներ, սակայն փորձարկանց, ինչպես նաև ամուսին կամ 12 փարեկանից մեծ արու զավակ ունեցող այրի կանանց համար երկար ժամանակ չէր հաջողվում թույլտվություն ձեռք բերել: «Նա նստած էր այնպեղ, - պատմում էր Մելիք-Բեգլարյանը, - կարմիր, բորբոքված աչքերով, սպառնալից, ինչպես դահիճ: Խեղճ կանայք՝ գունապ, թույլ, հյուծված, գալիս էին: Նրանց ձեռքերը այնպես էին դողում, որ չէին կարողանում անգամ բացել այն կտորը կամ թուղթը, որի մեջ իրենց անձնագիրն էին դրել:... Քարը կհուզվեր, բայց թուրքը մնում էր համր»:²⁰

Չնայած թուրքական հյուպատոսության կողմից հարուցվող արգելքներին, Բեռլինի կոմիտեի աշխատակիցները կարողացան փետրվարին հայրենիք ուղարկել առաջին թվով 48 փախստականներին, որոնք առանց բացառության միայնակ կանայք էին:²¹ Ներագայում, երբ հաջողվեց թուրք հյուպատոսի դիմադրությունը հաղթահարել, այդ գործընթացն ավելի արագացավ, և արդեն գարնանը, ինչպես Ա. Ամիրխանյանը էր իր՝ մայիսի 16-ի նամակում փնտրելագնում, օրական Կ. Պոլիս էին մեկնում 100-150 փախստականներ, որոնց բոլորի ճանապարհածախսը հոգում էր Բեռլինի կոմիտեն:²² Եթե նկարի առնենք, որ վերադարձի ցանկություն հիմնականում արտահայտում էին սոցիալապես ամենաանապահով փախստականները, ապա պարզ կդառնա, թե այդ որպիսի բեռնաթափում էր նշանակում օգնության աշխատանքների համար: Ուստի հաշվի առնելով նոր զարգացումները՝ Լեփսիուսը, որը դեռ 1897թ-ի վերջին ծրագրել էր Վառնայում գնել մի հողամաս և փրամադրել մի սեփական ընդարձակ որբանոցային

համալիրի շինարարությանը,²³ այդ մտքից հրաժարվեց: 1999թ-ին, երբ Լևփսիուսը տեղեկացավ, որ Ռուսչուկի գերմանական համայնքի ղեկավար պատրոք Թեոֆոր Վանգեմանը սեփական նախաձեռնությամբ հավաքել և իր փանը խնամում էր մի քանի հայ որբերի, նա որբանոցը տեղափոխեց այնտեղ՝ հանձնելով նրա ղեկավարմանը:²⁴ Եվս երկու փարի անց՝ 1901թ-ի հոկտեմբերին, Վանգեմանը պատրաստակամություն հայտնեց միայնակ հոգալ այնտեղ մնացած որբերի խնամքի ծախսերը, ուստի քանի որ բուլղարահայության սոցիալական դրությունն արդեն բավականաչափ կայունացած էր, Լևփսիուսն ու իր գործընկերները նպատակահարմար գրան որբանոցն իր գույքի հետ միասին հանձնել նրան և իրենց բարեգործական աշխատանքները Բուլղարիայում դադարեցնել՝ բոլոր միջոցներն ուղղելով Ուոհայում, Դիարբեքիրում, Կեսարիայում և Խոյում ձեռնարկված հայանպասք աշխատանքների ընդլայնմանը:²⁵

Այսպիսով, Բուլղարիայում մոլեզունդ համաճարակների և սոցիալ-տնտեսական սուր ճգնաժամի փարիներին Բեռլինի կոմիտեն անգերագնահատելի կարևոր դեր ունեցավ այնտեղ հանգրվանած բազմահազար հայ փախստականների գոյապահպանման, իսկ 1898թ-ից նաև նրանց հայրենադարձությունը կազմակերպելու հարցում: Եվ միայն այն փաստը, որ այդ ողջ ժամանակամիջոցում փախստականների շրջանում սովամահության որևէ դեպք չգրանցվեց,²⁶ պերճախոս վկայությունն էր այն բանի, թե օգնության աշխատանքները որքան արդյունավետ և հետևողականորեն էին փարվում:

1. Amiranjanjanz A., Briefe aus Rumienien und Bulgarien, "Der Christliche Orient", 1900, էջ 87: 20
2. Ա. Ամիրխանյանը հայերենից բացի վարժ փրապետում էր թուրքերեն, պարսկերեն և գերմաներեն լեզուներին: Կովկասում և Ռուսաստանում ավերարանական քարոզչությամբ զբաղվելու պատճառով նա Պեդերբուրգի եկեղեցական սինոդի կողմից աքսորվել էր Ռուսալ, որտեղից կարողանալով հեռանալ Ֆիլիստինիա՝ մինչև ԳԱԱ-ի հետ համագործակցությունը բնակություն էր հաստատել այնտեղ: Տե՛ս Abraham Amiranjanjanz, "Der Christliche Orient", 1900, էջ 100-102:
3. Անդ փն՝ Berichte uber das deutsche Hilfswerk in Armenien, էջ 281:
4. Անդ:
5. Անդ, էջ 89:
6. Amiranjanjanz A., Briefe aus Bulgarien, "Der Christliche Orient", 1897, էջ 134: Նմանք. Amiranjanjanz A., Briefe aus Bulgarien, անդ, էջ 184:
7. Տե՛ս Berichte uber das deutsche Hilfswerk in Armenien, անդ, էջ 282:
8. Անդ:

9. Schefer R., Geschichte der Deutschen Orient-Mission, Potsdam, 1932, էջ 15: Նմանք. Berichte uber das deutsche Hilfswerk in Armenien, "Der Christliche Orient", 1897, էջ 283:
10. Անդ:
11. Տե՛ս Das deutsche Hilfswerk fur Armenien, անդ, էջ 331-332:
12. Անդ, էջ 332:
13. Lepsius J., Ein Besuch in Varna, անդ, էջ 378:
14. Անդ, էջ 381:
15. Անդ, էջ 381:
16. Անդ:
17. Տե՛ս դր. Մելիք Բեգլարյանի նամակը, "Aus der Arbeit des Armenischen Hilfswerkes", 1898, էջ 23:
18. Անդ, փն՝ Unsere Waisen Kinder in der Turkei, Persien und Bulgarien, էջ 9:
19. Schefer R., Geschichte..., էջ 21:
20. Անդ:
21. Amiranjanjanz A., Aus Warna und Burgas, անդ, էջ 111:
22. Lepsius J., Ein Besuch in Varna, "Der Christliche Orient", 1897, էջ 381:
23. Տե՛ս Der gegenwertige Stand und die Aufgaben unseres Hilfswerkes, "Aus der Arbeit des Armenischen Hilfswerkes", 1899, էջ 32:
24. Տե՛ս Mitteilung, "Der Christliche Orient", 1901, էջ 196: Նմանք. Schiffer R., Geschichte..., էջ 38:
25. Amiranjanjanz A., Was in Bulgarien not thut, "Aus der Arbeit des Armenischen Hilfswerkes", 1899, էջ 10: